Արձանագրություն N 1

«ՀԱՓԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-1» (ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2) ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 28 փետրվարի 2017թ.

ժ.11.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Գրիգորյանը

Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Գևորգյան, Է. Ղուկասյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Սիմոնյան

I. ՀՀ կառավարության 10/02/2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջների կատարման մասին

-----------------------------------------------------------------------------------

(Մ. Գիրգորյան)

Ընդունել ի գիտություն, որ ՀՀ կառավարության 10/02/2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջների համաձայն մինչև գնումների հրավերների հաստատումը, գնահատող հանձնաժողովը գնանշման հարցումներ իրականացնելու նպատակով դիմել է վառելիքի վաճառք իրականացնող մասնակիցներին՝ առաջարկելով էլեկտրոնային փոստով պատասխանել գնանշման հարցումներին և ստացված արդյունքները համադրվել է նախահաշվային գներին:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով, որ գնվելիք ապրանքի համար ներկայացված նվազագույն շուկայական գների և նախատեսվող նախահաշվային գների միջև առկա տարբերությունը չի գերազանցում 15 տոկոսը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

ՀՀ կառավարության 10/02/2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջների համաձայն նշված ծածկագրով ընթացակարգի շրջանակներում վառելիքի գնման համար հիմք ընդունել "Հումանիտարականազերծման և փորձագիտական կենտրոն" ՊՈԱԿ-ի 2017թ. համար նախատեսված գնման առարկայի /վառելիք/ նախահաշվային գինը, որը տվյալ դեպքում կազմում է 1 լիտրի համար 400 ՀՀ դրամ, 19. 200 լիտրի համար ընդամենը 7 680 000 /յոթ միլիոն վեց հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ:

II. Շրջանակային համաձայնագրերով հրավերի (ծանուցման) տեքստը, պայմանագրի նախագիծը հաստատելու մասին (կցվում են)

-----------------------------------------------------------------------------------

(Մ. Գրիգորյան)

Հաստատել շրջանակային համաձայնագրերով հրավերի (ծանուցման) տեքստը և պայմանագրի նախագիծը (կցվում են):

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

III. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

-----------------------------------------------------------------------------------

(Մ. Գրիգորյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել օրենքով սահմանված կարգով՝ գնային առաջարկների բացման օրը, ք. Երևան, Հակոբ Հակոբյան 3/2 շ., 3-րդ հարկ, "Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոն" ՊՈԱԿ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Գրիգորյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Գևորգյան

Է. Ղուկասյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Սիմոնյան